ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2016 թվականի N 43-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ) ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի N 956-Ն հրամանը և մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններից ստացված՝ կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների կազմում փոփոխություններ կատարելու մասին գրավոր առաջարկությունները, որոշում եմ՝

1. ՀՀ Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին>> N 241-Ա որոշման հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1-N113 հավելվածների:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. մայիսի 16
ք. Կապան